ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«02» նոյեմբերի 2023թ. № 987-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի № 826-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի № 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի մայիսի 10-ի № 826-Ա հրամանով հաստատված № 1 հավելվածի Աշխատակարգի 25-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի մայիսի 10-ի «Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համակարգին տրամադրվող վարկային և

դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող ու իրականացվող ծրագրերի կառավարման խորհրդի աշխատակարգը և անհատական կազմը հաստատելու մասին» № 826-Ա հրամանի (այսուհետ՝ Հրաման) մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) Հրամանով հաստատված օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ծրագրերի կառավարման խորհրդի անհատական կազմում լրացնել «Արամ Մելքոնյան - Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական» բառերը:

6/2/2023

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք.Երևան